

## ՎԻՒՆՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԸ

*Արծեւ* (1) կու գայ սերին էմ,  
Ուսուլ պոյիդ մայիլ էմ,  
Հոգիդ օր սաղ մընայ նը,  
Չտեսնելուս *շեյիլ* (2) էմ:

Ջուրերուն կուած տեղը,  
Չագերուն *դոնած* (3) տեղը,  
*Արգուլանմիշ* (4) կ'ըլլամ կօ,  
Եարիս եան եկած տեղը:

Խաղ մը էնեմ հայերէն,  
Խաղ մ'ալ ըսեմ թրքերէն,  
Եկօ աղջիկ պագ մը տուր,  
Սա աչքերուտ ներքեւէն:

Էգիէ էգի ես անցայ,  
'Ռններուդ առջեւէն անցայ,  
Ըսիլեք շատ ունէի,  
Մէկէն հազացի անցայ:

*Մաննի* (5) մը ունիմ ալ կ'ուզէ,  
Պագուկը պարակ կ'ուզէ,  
Ընծի առնող *կըյիճը* (6),  
*Օմուզը սիլաճ* (7) կ'ուզէ:

Ըոքիան իմ տալ չունիմ,  
Ես պգտիկ էմ քար չունիմ,  
Եարըս ծեռացս առին,  
Ճէհիլ իմ խապար չունիմ:

Աման աման էմ էղեր,  
Հալէս եաման էմ եղեր,  
Ես *Հերու* (8) պիլպիլ էի,  
Էս *տէրի* (9) լալ էմ եղեր,

Խնծոք մը տամ առ տղայ,  
Առ տէ մեպդ դիր տղայ,  
Մերդ մամբուն վրայ է,  
Մի ցուցներ, դո՛ւ կեր տղայ:

*Տեներն* (10) էլեմ ի՞նչ կ'ըլլայ,  
Վարդին ծառը փուշ կ'ըլլայ,  
Իմ եարիս վարդ մի՛ ասէք,  
Վարդին էօմը կարն կ'ըլլայ:

Եարիս պարեւցի իրկուան դիմաց,  
Մագերը ձգեր էր երեսին դիմաց,  
Ասի թէ տուներնիդ ո՞ւր մնաց,  
Ասաց, է՛կօ տես, ծառերուն դիմաց:

Ճուրն էկեր է *փետերնիդ* (11),  
Ինծի առաւ տէրտէրնիդ,  
Տեղ երբայը չեմ հոգար,  
*Իսսիդ* (12) կը մնայ *եուրտերնիդ* (13):

*Չալուէն* (14) ձագ մը թռաւ,  
Նա տղուն պապը մեռաւ,  
Ես որբը չէի սիրեր,  
Էկաւ իմ գլխուս փլաւ:

Չալուէն *կըյեն* (15) քիթիս,  
Մէջքն ունի ոսկէ տիվիդ,  
Էս համեր ու առեր իմ,  
Անուցը *պելլի* (16) կըյին:

Պաղնանիդ օվա եազը,  
Մէյվանիդ չի տար պագի,  
Աղջիկները չըլլան նը,  
Տղաքը կ'ըլլան *թազի* (17):

Էմմիդ քեզի տայ փարս,  
Տուր *սայվիեն* (1) ինծի բերէ,  
Ես ալ քեզի էլմաստ տամ,  
*Ակնընճնեբուդ* (2) օղ ըրէ:

Մեկալ գիշեր մայրդ եկաւ,  
*Հէվասըս* (3) քեզի ընկաւ,  
Մօրդ *մէտէն* (4) շինեցի,  
Քեզի տալու խոստացաւ:

*ՄԻՒՆՆԻ Ա.* — 1) Անճրու: 2) Համաձայն: 3) Թառած: 4) Կը փնտռեմ կարօտով: 5) Մատանի: 6) Կտրիք: 7) Ուսը հրացան: 8) Անցեալ տարի: 9) Տարի:

*ՄԻՒՆՆԻ Բ.* — 10) Տանիքը: 11) Սահմանուդ: 12) Ամայի: 13) Տուներնիդ: 14) Փշաւ տնի: 15) Կտրեմ: 16) Յայտնի: 17) Թափառող շնիկ: 1) Եզրօրդ: 2) Ականջներուդ: 3) Փափաքս, ձգտումս: 4) Կամքը:

Մըբիս (5) մարդու մի ըսեր,  
Աս խապարը (6) մեպո դիր,  
Պաշխաները (7) գիտնան մը,  
Էմմուս կը գրեն սեւ գիր:

Պէսնիէն բերինք զօրով (8),  
Եկար պանպա-չամիչի բռնով,  
Եօքը տարի աշեցի (9),  
Պիտ պսակուինք մամուսով:

Տղայ Հասէթ (10) բան չըլլար,  
Գիշերը գայիր մը կ'ըլլար,  
Հարսերնիս տուր կը բանայ,  
Էծէս (11) խորունկ քուն կ'ըլլայ:

Եարիս ձեռքէն բռնեցի,  
Առի տուչտուներ (12) տարի  
Մօրոջս տուսպը (13) բացի,  
Ղըժ-մալմանտը (14) կերցուցի:

Եարս ինծի պագաւ մը,  
Ազրարս մեզի տեսաւ մը,  
Գնաց ասաց մօրոջս,  
Մայրս մեզի սրէողաց (1):

Կաս կարմիր է լաչակդ,  
Չամիչ լեցնեմ էթէկդ (2),  
Հարս որ գաս մեր տունը,  
Դու տրվիր մեր ատէթը (3):

Մարապին ձորի ազրիւրը,  
Կը վազէ պաղուկիկ ջուրը,  
Էրբամ բերեմ որ խմես,  
Ըլլայ տարտիդ տարմանը:

Ոսպենք, պակլանք, սիսեռենք,  
Ղարատեփէն բանջարենք,  
Անոնց տղան չեմ առնիր,  
Կ'առնեմ տղան Ղարսուզենց:

Տղայ գնայ բանդ բանիր,  
Աս գիշեր խէչս էկուր.  
Մայրդ շատ տուտայ մը՝  
Ինքիր (4) բերնին չափ մը տուր:

Կուտնայ տղաքը սոյլու են,  
Պոյերնին, պոսերնին եոսմա (5) են.  
Պաշխա (6) տեղացի չենք առնիր,  
Ազիկ - տղաք հերիք ենք:

Ազի աչքերդ կանաչ է,  
Զգիտեմ տարտոյ ի՞նչ է,  
Շատ մահլան (1) ես ընկիր.  
Լսէ՛, մայրդ քեզ կը կանչէ:

Տղայ դու շատ խորաթես (2) կօ,  
Դու քեզի բանի տեղ դնես կօ,  
Էս քեզ չեմ առնիր գաթը (3),  
Ինչո՞ւ համար մտմտաս կօ:

Ես գացի էրանին քաղը,  
Քեզի պիտ' առնեմ վաղը,  
Տունը մնաս կը մտիս,  
Մայրդ ցանկ գլխիդ հողը:

Ազիկ էկօ (4) նշանուինք,  
Չեռք ձեռքի տանք պսակուինք,  
Աշխարհքը մեռնիլ կայ ալաթս (5),  
Կանանչ ապրինք օրերնիս:

Աշխահին փարան ի՞նչ ընեմ,  
Քանի քեզի չեմ սիրեր,  
Զորով (6) թաղին ալ չ'երբար  
Ումուս (7) մ'ըներ. քեզ կ'առնեմ:

Մայրիկ ախըս (8) մի՛ առնիր,  
Կ'ապրիմ կենճ (9), կանանչ օրեր,  
Թողէ՛ք ուզածս ես առնիմ,  
Հոգ չէ, լացով օրեր ապրիմ:

ՍԻՒՆԱԿ Ա.— 5) Գազոնիս: 6) Լուրը: 7) Ուրիշները: 8) Բռնի: 9) Սպանցի: 10) Ատանկ: 11) Մեծ մայրս: 12) Ննջասենեակ: 13) Պահարանը: 14) Պտուղով անուշ: 1) Սրդողեցաւ: 2) Գոգը՝ գոգնոցին մէջ: 3) Սովորութիւնը:

ՍԻՒՆԱԿ Բ.— 4) Անոր, իրեն: 5) Վայելուչ: 1) Թաղը: 2) Կը խօսիս: 3) Արդէն: 4) Եւ: 5) Բուրբիս: 6) Շունը բռնի որսի: 7) Յոյս: 8) Ցաւս, անէծես: 9) Երիտասարդ:

կիրասանի լեռներէն,  
Երբոր կուռիներ գաս նը,  
կաստեներին բեռներէն,  
Ներս լեցուր մեր տուններէն:

Ղաթար (1) հիւսած մագերդ,  
Սրմա (2) քաշած աչքերդ,  
Երեսդ վարդ կ'ըլմանի (3),  
Շատ անուշ են շուրքերդ:

Սեւ բուրդէ շալվար հագար,  
Ելար մեր տունը էկար,  
Պէսներէն բերած չամիչդ,  
Ինծի հետիյէ(4) էրիր:

Թագելեց պետեսթէնը (5),  
Ծարս նստեր է թիւքանը (6),  
Իրիկունը դէմ պիտ երթամ,  
Երբ ճին հեծնէ տուն գայ նը:

Ինծի խօսք կու տաս պազի (7),  
Չեմ հաւատար ես քեզի,  
Այ անիծեմ ես պիտի,  
Ղզլուրսը(8) բռնէ քեզ:

Աղջի մէկ հատ տղայ մ'եմ,  
Մօրս, պապուս պարծանքն եմ,  
Էկէր պաշտ (9) տեղ չիհայիս,  
Կ'երդուրննամ, քեզի կ'առնեմ:

Ամիս մ'է եսթախն (1) եմ պառկեր,  
Քուկ տէրտէդ մարտդ եմ կապեր,  
Հոգիս էլ բերանս եկաւ,  
Հէքիմն (2) առ' տէ ինծի բեր:

Ելար, կուռնայ ժամը գացիր,  
Ժամուն մէջ ճաշակ (3) առիր,  
Անկէ մեր տունն երբ եկար  
Հետդ ինծ նշխարք բերիր:

Տենեբնիս(4) հաւկիք խաղցիր,  
Խէտ (5) հաւկիքս հոն բերիր,  
Շատ խելացի տղայ ես,  
Ալայը ութիչ(6) բրիր:

Չիքէ ֆիստանս ալ հագայ,  
Չեր մահլան (7) ժամ եկայ,  
Քեզի անտէ (8) երբ տեսայ,  
Խնդումներես տուն եկայ:

Ետբուզէն պիպէն (9) եկաւ,  
Մայրդ առաւ տուն բերաւ,  
Չաման ու զարդար խառնեց,  
Ուտողին աչքը քորցաւ:

Պէսնու պամպա չամիչը,  
Լեցուցի տապակին մէջը,  
Տապկած՝ հարիս կերցուցի,  
Ելայ նստայ իր խէչը (10):

Խաւիժը(1) քեզ պաշտար բրի,  
Ելար մինչեւ Անթէպ կացիր,  
Եօթը տարի հոն մնացիր,  
Այնթէպու հելվա բերիր:

Մաշարանիդ (2) փրփրեմ,  
Էյէկուհիդ (3) քրքրեմ,  
Հալպու որ ես տուն գամ նը,  
Քեզի իլանդաւի պիտ' բերեմ:

Հագածդ է Մարաշի ապա,  
Շալվարդ է լազի քապա,  
Տու ասիր քէ թէզ (4) կու գամ,  
Քու խօսքդ ո՞ւր է հալա:

Աղջի ինչո՞ւ նագ կ'ընես,  
Հոգիս ամէն օր կը հանես,  
Կ'երթամ պաշկասին (5) կ'առնեմ,  
Չայտա (6) չ'ըներ եքէ լաս:

ՍԻՒՆԱԿ Ա.— 1) Կարգ-կարգ: 2) Ծաբիր: 3) Կը նմանի: 4) Նուէր: 5) Հիմ-գերդաս.  
տանը: 6) Խանութք: 7) Երբեմն: 8) Չարը: 9) Երէ ուրիշ: 1) Անկողին: 2) Բժիշկը: 3) Հա.  
դորդուքիւն:

ՍԻՒՆԱԿ Բ.— 4) Տանիքներս: 5) Նաշխուած: 6) Շահիլ: 7) Թաղը: 8) Այնտեղ: 9)  
Կճու պղպեղ: 10) Մօտիկը, կողքին: 1) Իւրով եփուած խմորեղէն: 2) Բանջարանոց: 3) Կո.  
դերնիդ: 4) Շուտ, արագ: 5) Ուրիշը: 6) Օգուտ:

Տղայ, ինձի վախ մի տար,  
Բախտըս ինձի քար կու տայ,  
Կուտինը տղայ շատ կայ,  
Կ'առնեմ *սոյոզով* (7), հաւատա՛:

Աստուած քեզի քար քոյ տայ,  
*Հէլպէթ* (8) մէկ ալ ինձ կու տայ,  
Պոյով, պոսով աղջիկ շատ,  
Մէկն ալ ինձի խօսք կու տայ:

Ծովուն *չէպը* (1) շատ պարճը է,  
Շուղունին կեռաս *քարս* (2) է,  
Անչնալուն չի կերաւ,  
*Տըհա* (3) անի նոր հարս է:

Կեստ'ւր, քեզի կ'ըսեմ կօ,  
Իմ *ղայպաթը* (4) կ'ընես կօ,  
Ես քուկ տղադ եմ առեր,  
Կապէ *ղաղարդ* (5), կ'ըսեմ կօ:

Հարսները, հըմիկ մօտայ են,  
Կեստընին շան տեղ կը դնեն,  
Էրիկնուն *ղոլթուխէն* (6) կուտան,  
Տղան մօրմէն կը գատեն:

Ելայ քուքը քոքուեցի,  
Շիրանն աղէկ քամեցի,  
*Մեռոլ ու չարփու* (7) լեցուցի,  
*Կիւն պալին* (8) ալ երեցի:

Կիւնպալին լեցուն *սոլոլով* (9),  
*Հայպէն* (10) լեցուն ընկոյզով  
Եարս քոյ մատի ուտէ,  
Ես ալ մատիմ իրեն քով:

Տէր Գասպարը պըսակեց,  
Կոխնուս պսակ կապեց,  
Ձին հեծայ ձեր տունն եկայ,  
Ձեր տունը պսակս քակեց:

*Տահա* (1) ես նոր հարս էի,  
Մէկուդ քերան չի բացի,  
Տուք անամօք մարդիկ էք,  
Ձեզ քոզուցի մօրս գացի:

*Պոստանեիդ* (2) ցաներ էք լըհանայ,  
*Ղայպաթս* (3) կ'ընէք *ղանա զանա* (4),  
Ես քեզի *էլէլէն* (5) չեմ առներ,  
*Պաշխասին* (6) մ'ընէք *մահանայ* (7):

Տղայ գլուխդ գէլ է,  
Խայտառակ այդ ինչ հալ է,  
Դու գնայ տեղդ կեցիր,  
Աղջիկը *ճէֆայիր* (8) մալ է:

Մօրոջդ *թոյնուքը* (9) մտար  
*Լական* (10) մը պոշալան կերար,  
Տեվէ տապանի եղար  
*Ղաչայաղի* (11) վեր ելար:

Աշխարհը մարդոց համար է,  
Մարդն էլ աշխարհի համար,  
Մեզի պէս *աջոները* (12),  
Ձեզ պէս քաջ տղոց համար:

Աղջիկ երբ քեզի *ուննայի* (13),  
Քեզի դումաշներ կ'առնէի,  
Աստուած եթէ փարս չտայ,  
*Պօրճընա* (14) տուն կը շինէի:

Ամէն օր այնտեղ մնայիմք,  
Անկէ ալ Ղալան հայէիմք,  
*Չարսուն* (1) ալ թէ ցած ըլլար,  
*Տուչմանը* (2) խենթեցնէիմք:

Այսօր շատ *քէրվան* (3) եկաւ,  
Եարէս *սոլ խապէր* (4) քերաւ,  
Եարս Հալպէն եկաւ նը,  
Ինձ տարապուս մը քերաւ:

*ՍԻՒՆԱԿ Ա.*— 7) Հասակովս: 8) Անշուշտ: 1) Ժայռը: 2) Քաղցր: 3) Տակաւին: 4) Բամբասանք: 5) Լեզուդ կապէ: 6) Թելուակէն: 7) Մեղր, հիւրէ շաղախ: 8) Անուշի տեսակ: 9) Հողէ աման: 10) Տոպրակի ձեւ:

*ՍԻՒՆԱԿ Բ.*— 1) Տակաւին: 2) Պարտէզնիդ: 3) Բամբասանք: 4) Անընդհատ: 5) Առաջին, կանուխէն: 6) Ուրիշը: 7) Պատմառ: 8) Աղամանդ: 9) Խոհանոցը: 10) Աման: 11) Փայջելով: 12) Աղջիկները: 13) Ուննայի: 14) Ապառիկ: 1) Շուկան: 2) Թշմամբ: 3) Կարաւան: 4) Լեցուն լուր:

Տարապուսը կապեցի,  
Էմոնցս հասնիք (5) գացի,  
Ես քսի ինծի տեսաւ նը,  
Ես ալ քեւն առի խաղցի:

Կարմիր զանաւրվան (6) ոտքդ,  
Տարապուսը մէջկըդ,  
Ես քու դատէդ եմ առեր,  
Պոյիդ, պոսիդ՝ ու աչքիդ:

Տղայ անունդ Ասատուր,  
Եկո ինծի խօսք մը տուր,  
Ինծի քեզի չի տան նը,  
Ոսկիներդ շուտ ցոյց տուր:

Աղջիկ, փարա շատ ունիմ,  
Իլէ(8) ես քեզի կ'առնիմ,  
Մայրդ, պապդ չի տան նը,  
Մի հոգար, կը փախցնիմ:

Տղայ, հատաս (9) բան կ'ըլլայ,  
Աղջիկը Կէսր(10) է մըլա (11)  
Անի նամուս առ ունի,  
Ամէն օր խէչդ (12) կ'ըլլա՞յ:

Ելայ ջաղարչը գացի  
Ալիւրը բարակ աղցի,  
Քեռկինդ ինծի խօսք տուաւ,  
Խնդուէ՛ս սիրտս հանեցի:

Ղարասեփէն է բաւիթան (1),  
Կը շինուի ասկէրին (2) քէչէն,  
Քեչէ շալվար մը շինեմ,  
Ալամով (3) բանուած փաշան:

Ղոնախին առաջը չայիբ (4),  
Դու մեր տենէրը (5) հայիր,  
Գլոխս պաշլըիս պիտ' կապեմ  
Ոսկիներով, որ տուիր:

Աղջիկ դու նագ շատ բիր,  
Խելքս գլխէս քոցուցիր,  
Անչափ քեզի կերեկցայ (6)  
Ալ իմ հոգիս հանեցիր:

Ուր բլլայի չբլլայի,  
Քէչէ (7) կուտինն բլլայի,  
Ես չմեռած հեղ մըն ալ,  
Ակինն գուրէն խմէի:

Շըխշըխ խնձոր բերէին,  
Մ'էջը դարեմփիլ շէրն(8),  
Սիրածս տուն բերէին,  
Ինծի ալ խէչը դնէին:

Տղայ, դու ինծի աչք ունիս,  
Ըմմա(9), դու փարա չունիս,  
Ազատ տղան չեմ առներ,  
Համաս(10), պոյ պոս ալ չունիս:

Աղջիկ ինծի վախ մի տար,  
Նար քէ դու պէլադ գտար,  
Երկու ձեռքդ բռնած եմ,  
Զորով պագդ ալ կ'առնեմ:

Էրինիդ (1) բուսնի կորեկ,  
Ես քեզի տեսայ երէկ,  
Ասի ինչպէ՞ս սէվտայ (2) է,  
Նէ գիշեր ունիմ, նէ ցերեկ:

Սէվտան հէչ բանի չբլլար,  
Էկէր մօրոջդ մատէն (3) բլլար,  
Աստուած մեր հետ բլլայ նը,  
Տուշմանին (4) խօսքը չբլլար:

Սերկեր տարէն (5) ջուր կու գայ  
Հայածս ուխտի կու գայ,  
Անտէ (6) մատաղ որ ընէ,  
Նշանուտի հոտ կու գայ:

ՍԻՆՆԱԿ Ա.— 5) Հարսանիք: 6) Կոշիկի ձեւ մը: 8) Անպայման: 9) Այդպէս: 10) Գեթի:  
11) Արդեօք: 12) Մօտդ, կողքիդ: 1) Գործարան: 2) Զինուորին: 3) Գրչով: 4) Արտ: 5) Տա-  
նիք:

ՍԻՆՆԱԿ Բ.— 6) Աղաչեցի: 7) Երանի: 8) Լեցնէի: 9) Բայց: 10) Նոյնիսկ: 1) Այգիներդ:  
2) Սեր: 3) Կամքը: 4) Թշնամիին: 5) Զորը: 6) Այնտեղ:

Աղջիկ անունդ ինչ է,  
Աշուիֆներդ կանաչ է,  
Քուվս նստեր ես ըմժա (7),  
Մայրդ քեզի էօ կանչէ (8):

Պանտայենց սոխախէն (9) անցայ,  
Անտէ քովդ կայնեցայ,  
Աղբարդ մեզի տեսաւ նը,  
Ամչցայ գետին հայեցայ:

Իմ էնքարիս է մավի,  
Տիկիլնեբը (10) կարմիր քովի,  
Չնշանուած պագ մ'ուզեց,  
Երեսէն շապլախ(11) տուի:

Չեբին ալայ(1) պիտ կանչենք,  
Քուկ հետ ալայ պիտ քաշենք,  
Մատմատի որ անցնենք,  
Չալղըճուն պաշղըչ(2) պիտ ձգենք:

Երէկ գիշեր ձերն եկայ,  
Քեզի անտէ չգտայ,  
Պաշխա տղի խօսք տուիր,  
Հերսէս(3) ես ընծի կերայ:

Տակապուրը եփեցիք,  
Վրան սխտար լեցուցիք,  
Ինծի պու մը կերցուցիք,  
Լոխման էմմին կանչեցիք:

Ղարտըմէն(4) քեցիցի,  
Ճեմնէմնեց Եօխուչը(5) գացի,  
Քեզի ձեր սըֆան (6) տեսայ,  
Վազեցի քեզ բռնեցի:

Հագածդ սրմալու չեփկէն է,  
Պոյդ, պասդ էրկան է,  
Մէյ մէկուս շատ ույմիչ(7) ենք,  
Աստուած մեզ բարին ընէ:

Եաշ-տեփէին Եօխուչը,  
Անտէ(դ) է Փիրենց տունը,  
Աննց տեյէն(8) հեծնես նը,  
Ղարղ(9) մը կու գաս մեր տունը:

Ղարար-շեպէն ձայն մ'եկաւ  
Եկաւ ականջս մտաւ,  
Անի իմ եարիս ձէնն էր,  
Դիշերը քուս եկաւ:

Մայրս ինծի ծեծէ կօ,  
Ըրածդ գէշ է, կ'ըսէ կօ,  
Ղըժ-մեկմէնտս գողցեր ես,  
Տարեր նշանծուդ տուեր ես:

Ես կիկալի եփեցի,  
Քեզի համար պահեցի,  
Սո գիշեր էկօ կեր,  
Սահլիկին(1) մէջ լեցուցի:

Պրինձով հատիկ լսաշեցի,  
Վրան ա(լ) ընկոյզ լեցուցի,  
Քիրսիին(2) վրայ որ դրին,  
Ճանկով նանկով նետեցի(3):

Մկրտիչ կարողիկուս քարոզեց,  
40 փեսայ-հարս մէկէն պասկեց,  
Երեք ամիս նշանուած զանին(4) ըրաւ,  
Էլէլ(5) չքողուք թեւաբէհեց(6):

Խաղողէն դուրուլս եփեմ,  
Շիշէին մէջ լեցնեմ,  
Քեզի շերպէք որ շինեմ,  
Ղատէֆին(7) մէջ լեցնեմ:

Երկու շաքի մեծ պահէ է,  
Ղանինը(8) եօք շարաք է,  
Սոխին վրայի եօք դեպիրը(9)  
Հատած օրը գատիկ է:

ՍԻՆԱԿ Ա. — 7) Թէն: 8) Կը կանչէ: 9) Փողոցէն: 10) Ծոպիկները: 11) Ապսակ: 1) Երգի եզանակ: 2) Նուէր հուազողին: 3) Բարկուքենէս: 4) Փողոցի ստտինան: 5) Տանիքի վրայ: 7) Յարմար:

ՍԻՆԱԿ Բ. — 8) Ուղտը: 9) Շիտակ: 1) Պզտիկ աման: 2) Թոնիթին: 3) Բերանը նետել: 4) Կանոն: 5) Աւելի: 6) Պատուիրեց: 7) Գաւարին: 8) Օրէմքը, սովորութիւնը: 9) Փետուրները:

Աղ-տէրէին կարմիր *խայտը*(1),  
Հօխա մը կու գայ հատը,  
Գացիր *անտէ*(2) մնացիր  
Ինծի բերիր այս տարտը:

Աղջիկ ձեր տունը եկայ,  
*Բէնճէրէէն*(3) ներս մտայ  
Քեզի եաքախոյ գտայ,  
Զորս կողմդ *էլլըտեցայ*(4):

Ղարա-էրէնին ձորը,  
Սըմուկնուն ալ *կարմուճը*(5),  
Զի հեծեած անկէ անցար,  
*Սըխ մը*(6) հայեցար մեր տունը:

Եկու ականջիդ բան ասեմ,  
Գիտե՞ս ես քեզի պիտ առնեմ,  
Մայրդ որ շատ հաչէ նը,  
Անոր *ջանկան*(7) կը կապեմ:

Զատիկ է եկեր,  
Կաքայ ես եփեր,  
Մեր տունն ես եկեր,  
Ընծայ ես բերեր:

Կարմիր ծեփի ես ըրեր,  
Գլուխդ ես *վլացեր*(8)  
Կարմիր վարդ ես դարձեր,  
Աջօ մ'ես եղեր:

*Կեյմէյիդ ունկը*(1) մտուու է,  
Պըլըխը սեւ ու գօղու է,  
Տղայ, քեզի չեմ առնեմ,  
Պապդ տերտլի, չորու է:

Երդում կ'ընեմ, կ'ըսեմ, մեղայ,  
Ես *հատէզ*(2) առտուզ չեղայ,  
Անոնց տղաքը չեմ առնեմ,  
Քեզի *կիվէնմիշ*(3) եղայ:

Ի՞նչ օնախի աղջիկ ես,  
Ճինսդ ընծի պիտ ասես,  
Քեզի պիտ առնեմ փախիմ,  
*Սըռզ*(4) մէկու մը չըսես:

Այս:ր-դայաին կանկառը,  
Կարմիր ախրիւրին սանսարը,  
*Քշտեմ*(5) քեզի քիւրք ընեմ,  
Որ դու պահես մեր *տուր*(6):

Պաստեղէն կէյմէ բերիր,  
Ատիր տուշտունը դրիր,  
Պեմեզով քանած *մահմաս*(7),  
Ատիր դու ծոցդ դրիր:

Շալկեր եմ դարտի բեռներ,  
Ախ Աստուած հոգիս առնէր,  
Ինչ աղէկ *ղանիւն*(8) պիտ ըլլար,  
Ուգողը ուգածը առնէր:

Կարմիր հոգով ծեփ ծեփեմ  
Զատիկն կաքայ պիտ եփեմ,  
Կեսըրայրս մեզի գայ նը,  
Անոր ձեռքը պիտ պագնեմ:

Մեր քոնիքին քոյնուքը,  
Լծիկինն ներքեւի կոյուքը,  
Եղբայրս եկեր գողցեր է,  
Մայրս տուեր է *տայեախը*(1):

Մենք գացինք Ղաքար *չէպը* (2),  
Այնտեղ ըրինք խօսք կապը,  
Դուն ինձ պագիր ես քեզի,  
Ալ չի քակուիր ան կապը:

Լուսինկան տեսայ տղայ,  
Կ'երդուրնամ կ'ըսեմ, մեղայ,  
*Ղայկէթնուդ* (3) բան չեմ ասեր,  
Աղ խօսքիդ *ղաթլամիշ* (4) եղայ:

ՄԻԻՆԱԿ Ա.— 1) Զուկի տեսակ: 2) Այնտեղ: 3) Պատուհանէն: 4) Դարձայ: 5) Կամուրջը:

6) Ուշագիր: 7) Թումջը: 8) Լուացեր: 1) Գոյնը: 2) Ատանկ: 3) Վստահեցայ:

ՄԻԻՆԱԿ Բ.— 4) Գաղտնիք: 5) Զարնեմ: 6) Պատիւր: 7) Թաշկինակս: 8) Կանոն: 1) Ենծը: 2) Ժայռը: 3) Ետեւունդ բանբասանք: 4) Երմանցայ, առնուցայ:

Շուղուլճուլթը (5) քշտեցիր (6),  
Առիր մեր տունը բերիր,  
Ապլայենքս ինձի գովեցին,  
Ասոր համար ինձ առիր:

Աղջիկ քեզի աւ (7) բերի,  
Քեզի տէները (8) տարի,  
Ինձի պագ մը, որ տուիր,  
Տօպուսան (9) ավիդ դրի:

Մարապին ձորի աղբիւրը,  
Ճըռ ճըռ կը վագէ ջուրը,  
Աս գիշեր ձեզի պիտ գամ,  
Ինձի աշէ (10) ձեր դուռը:

Գիշերը էկու մեզի,  
Շատ բան պիտ ասեմ քեզի,  
Սըռս (1) մէկու մը չըսես,  
Շատ տուճմաններ (2) կան մեզի:

Ղանայենց դուռէն անցայ,  
Այնտեղ ես քեզի տեսայ,  
Միրտս տեղէն բունդ էլաւ,  
Ժամուն (3) գաւիթը մտայ:

Ո՞ր մահւան (4) է ձեր տունը,  
Ի՞նչ է պապուդ անունը,  
Ինձի ինչո՞ւ չես ասեր,  
Ձեր տան զաթար-ղանինը (5):

Ջատկին կիրակի գիշերը,  
Զկոխես էդունուս (6) փուշերը  
Գաղտուկ մը էկօ տեսնեմ,  
Որ պագնես իմ բուշերը:

Պըյըլիդ դատան անէի,  
Ամուր մը ձեռքէդ բռնէի,  
Մեզի տեսնող չըլլար նը,  
Ես քու գիրկդ մտնէի:

Տղայ, զանարվէդ (7) դեղին է,  
Հեռէս (8) հագնիլ դանի՞ն է,  
Ես քեզ պիտ առնեմ ըմսա,  
Մահլանիդ շատ խերուն (9) է:

Կունայ աղջիկը մեւայիք (10) է,  
Տղաներն ալ շատ չեղեպի (11) են,  
Մենք օտար տղայ չենք առներ,  
Աղջիկ – տղայ հերիք են:

Թուլումպանուն (1) զըռ չըռը  
Ալայ քաշենք քուկ հետը,  
Էկէր (2) ինձի խօսք տաս նը,  
Մատնի դնեմ քուկ մատը:

Մարաշու գինի խմեցիր,  
Ագահ փորդ ուղցուցիր,  
Շարաք մը եաթախ պառկեցար,  
«Աման հարս» (3) պռռացիր:

Հալէպէն քամբորդ է էկեր,  
Աղէկ խապար է բերեր,  
Եարիս գրած գիրերը,  
Պապն է նստեր կարդացեր:

Աղջիկ, ինչո՞ւ կուլաս կօ,  
Խելքս գլխէս հանես կօ,  
Կուգես նը չկարգուիմք:  
Մագերդ ինչո՞ւ փետես կօ:

Կարմիր կօշիկը ոտքիդ,  
Ձեռքս խոթեմ քու գօտիդ,  
Մէջէն հանեմ զութիներ (4),  
Առնեմ ես քու միսկ հոտէս:

Գարբէլ (5) հրեշտակն էկաւ,  
Ինձի ձեր տունը բերաւ,  
Առաւօտուն արքնցայ,  
Էրագս միտքս եկաւ:

ՍԻՒՆԱԿ Ա. — 5) Թռչուն: 6) Ջարկի: 7) Որս: 8) Տանիքը: 9) Ոսկեղէն գարդ: 10) Սպա-  
սէ: 11) Գաղտնիքս: 2) Թշնամիները: 3) Եկեղեցիին: 4) Թաղը: 5) Կանոնը: 6) Այգիմուս-

ՍԻՒՆԱԿ Բ. — 7) Ոտնաման: 8) Ատանկ: 9) Հեռուն: 10) Հրեշտակ: 11) Ինքնակամ:  
1) Փչող: 2) Եթէ: 3) Մայրիկ: 4) Տուփեր: 5) Գարբիէլ:



Կշիռքը ոսկի տրի,  
Մէկ աչքն ալ քեզի տրի,  
Ազէկ մը սանկ կշռեցի,  
Քեզ օսկիէն ծանր բերի:

Կուտինը ձորի մէջ է,  
Կուպինը անոր խէջ է,  
Ծովուն ու Ակին ջուրը,  
Աշխարհին համը մէջն է:

Շուղուլուսը թուփը կերաւ,  
Ղառղան(1) ընկոյզը տարաւ,  
Տալս քէսէ է շիներ,  
Իմ կարս ալ ինծի բերաւ:

Մարաշու ապա ես հագեր,  
Ձի հեծեր տուն ես եկեր,  
Մարաշու ընկուզով *սամսան* (2),  
Ինծի *Հէտիյէ*(3) ես բերեր:

Ազիկ հեծած ձիս ալս,  
Փէշէնկ *պէկիրս* (4) է դալս,  
Ղօլփոլատին ձայները,  
Ականջիդ հասա՞ւ *մըլա* (5):

Յանեմ որհանին կանանչը,  
Ղարէնփիլ բուննի մէջը,  
Եարս սէֆին քող նստի,  
Ես ալ *կախիլ*(6) իր *խէչը*(7):

Ալայ քաշեմք քուկ հետդ,  
Մատս անցընեմ մատիդ,  
Էմփիդ քեզի չի տեսնէ մը,  
Փախիմք քրքանք մեր էգին:

Եկիօք էմին շալ շինեց,  
Ղըլնանը անոր *ըմանցուց* (8),  
Ելան *դատիլի* (9) գացին,  
*Հախը* (10) Եկիօքին դարձուց:

Մեր չարտախին օրանը,  
Բարկենտանքին պարանը,  
Աստուած սիրես, մի՛ երթար,  
Թող երթայ ատ քարանը:

Կէօկ Սուէն դու ձուկ բերիր,  
Ազէկը սիրածիդ տարիր,  
*Խըլանէթ* (1) դրացինի տղայ,  
Ինծ թողուցիր ան առիր:

Շաշ պաշլիկիդ սաչալը,  
Կուզեն ձորի կախալը,  
Առուտուն կը խօսան,  
Ազիկներուն *չատ-խասը* (2):

Ղարասարի մեծ լեռը,  
Լեցուր ընկուզին բեռը,  
*Ղաթըրճին* (3) ալ որ գայ մը,  
Տուն եկու անոր հետը:

Կեսուր, ինծի լացուցիր,  
Տուշտունին տուր քացիր,  
Տղադ քովդ կանչեցիր,  
*Ղաթար* (4) մը սուտ շարեցիր:

Տարապուլուս կօտին մէջքիս,  
Կալոշ փոքինը ումքիս,  
Ոսկի տախտակը կուշքիս,  
Ղազիէ *պաշլիքը* (5) նակտիս:

Հարուստ տղայ առնէի,  
Տոռու ձիուն նստէի,  
Պսակի ժամ երթայի,  
Սրտիս մուրազն առնէի:

Հայերը կ'ըսեն քանուսն,  
Հոռոմներն ալ *սասանտա*,  
Ես այդ գինին չեմ խմեր,  
Թող լեցունէ Սառան տայ:

ՄԻՒՆԱԿ Ա.— 1) Ագուալը: 2) Քաղցրեղէն: 3) Նուէր: 4) Ձիս: 5) Արդեօք: 6) Կանգնիմ:  
7) Կողքին: 8) Նմանցուց: 9) Դատարարին: 10) Իրաւունքը:

ՄԻՒՆԱԿ Բ.— 1) Ապերախտ: 2) Լաւագոյճը: 3) Զիսպանը: 4) Շարք մը: 5) Գլխու ծածկոց:

Պուրճէն եւ քեզի տեսայ,  
Եկայ ձեր տունը հասայ,  
Աղբալոյ ինծի տեսաւ նը,  
Ինքն իր դէմ կը Փըշայ:

Ակին ջուրը շատ պաղ է,  
Մեր սոխախն (1) ալ շատ նեղ է,  
Ան առուէն անցնիս նը,  
Ալայ քաշէ, խաղ ըրէ:

Տարերը գիտես, ո՞ւր է,  
Մեր տունը զորդ (2) հոն է,  
Ինծի կանչել ուզես նը,  
Իմ անունս Ղանա (3) է:

Ծովը գացի եւ լողայ,  
Եարիս խընծորը գողայ,  
Անի ինծի տեսաւ նը,  
Քշտեցի անկէջէն (4) անցայ:

Խաղերդ (5) ականջս մտան,  
Եւ քեզի տեսայ Աթան (6),  
Տուշմանս առնէ դատան,  
Եւ պիտ առնեմ ան տղան:

Աջօ, եւ քեզի տեսայ,  
Ձեր էզուն ուղը (7) հասայ,  
Աստուած ինծի փարա տայ,  
Ըլլայի ձեզի փեսայ:

Տղայ անունդ Ասատուր,  
Քրոջմէդ ինծի հարցուր,  
Ինծի քեզի չես տար կօ,  
Եկու դուն առ ու փախցուր:

Ղարաթեփին սեւ լեռը,  
Քացի տէրտերուս բեռը,  
Ինծի վէրէմ (1) է ըրեր,  
Անօ՞ք, համուսն ու առը:

Շուգուլէն տղայ մը ըլլար,  
Ինքը ետում, պըլխը սեւ ըլլար,  
Ինծի իրեն ուզէին նէ,  
Սաղէն՝ աղջիկ հարս կ'երթար:

Տէրտերը մեզի պսակեց,  
Պսակնուս խաչը կ'ապեց,  
Հարս ու փեսայ խաղցուցին,  
Տալս տաք երեսս պաշեց:

Ծովուն շէյլը (2) շատ բարձ (3) է,  
Եարս տահա (4) նոր հարս է,  
Բուլլուն (5) երեսէն առի,  
Պաշիկները շատ քարս (6) է:

Մամուկ (7) քարին երբ երթանք,  
Մեր տարտերը հոն կ'արդանք,  
Մամուկն ալ չի լսէ նը,  
Ելլենք Սուրբ Սառային երթանք:

Թագունէն ջուր խմեցի,  
Եւ այն տղան սիրեցի,  
Մայրս անոր չի տուաւ,  
Միրածս առի փախցուցի:

Ախտայ եւ հագեր, քեւերը հագիկ,  
Թեւերուդ անցունեմ ոսկի պիւէզիկ (1),  
Քեզի համադ եւ հոգիս կու տամ,  
Վարդերէն տահա շատ եւ հագիկ:

Ղալտըրըմէն (2) քելեցիր (3),  
Նշանածիդ տունը գացիր,  
Խօսիդ տէրը դու չեղար,  
Ինչո՞ւ ինծի խաբեցիր:

Աղջիկ դու շատ կանանչ եւ,  
Պոյդ պարզդ՝ շատ կարն եւ,  
Գնա քեզի հար մը գտիր,  
Տես դու շատ անհաս եւ:

ՄԻՒՆԱԿ Ա.— 1) Փողոցը: 2) ձիշո: 3) Անուն: 4) Ջարիկի միւս կողմն անցայ: 5) Երգերը: 6) Անուն վայրի: 7) Այգիին եզերքը, ծայրը: 1) Թոքախտ:

ՄԻՒՆԱԿ Բ.— 2) Ժայռ, քարայր: 3) Բարձր: 4) Դեռ: 5) Քօղը, ծածկոցը: 6) Քաղցր: 7) Ուխտատեղի: 1) Ապարանջան: 2) Մայրերէն: 3) Քալեցիր:

Աթ ուչուրանէն (4) ձայն մ'եկաւ,  
Իմ եարիս հոտը էկաւ,  
Մեր տէներէն (5) տեսայ ես,  
Ձին հեծած մեզի էկաւ:

Ձախձորէն ես ձի հեծայ,  
Ժամը (6) գացի վար իջայ,  
Գլուխ գլխի դրինք նէ,  
Եարիս հետ պսակուեցայ:

Աղջիկ, քեզի ի՛նչ ընեմ,  
Առնեմ մեր տունը տանիմ,  
Սավայիներ հագցունեմ,  
Հալէպի լոխում կերցունիմ:

Աղջիկ քեզի առնէի,  
Ղառթալ (7) ըլլայի թռնէի,  
Մէկ օր հետդ ըլլայի,  
մէկալ օրը մեռնէի:

Ղասի (1) կուտով մալմանը,  
Իմ եարիս նագիք մատը,  
Քիրսին (2) նստի թող ուտէ,  
Ղարամատինն (3) ալ հետը:

Էկօ (4) աղջիկ ժամ էրքանք,  
Ձեռք ձեռքի տանք ու երքանք,  
Տէրտէրը թող մեզ պսակէ,  
Ձիեր հեծնենք տուն երքանք:

Պսակիս մատնին գողցար,  
Էծէս տեսաւ, դու վախցար,  
Ես քեզմէ քեզ եղայ նը,  
Մատնիս ետ տալ խոստացար:

Երեսներդ կարմրուկ,  
Աչքերդ մե՛նծ, սվուլիկ,  
Մատնիդ քեզի տուի նը,  
Տուիք անուշիկ պաշիկ:

Ժամուն ետերը ղալա (5) է,  
Կարգուիլը շատ ղալա (6) է,  
Վախնամ տղայ չունենամ,  
Աղջիկը գլխու պէլալ (7) է:

Էլար անոնցը գացիր,  
Սուտերուդ տորպակը (8) բացիր,  
Երկու աչուիքդ քորնայ (9),  
Ինձ ուզածէս գատեցիր:

Տղայ պոկունիդ հաստ է,  
Ան աղջիկը քեզի տոտ (10) է,  
Ես քեզի էլէլէն (11) չեմ առնիր,  
Մայրդ ինձի շատ ղաստ (12) է:

Ձեռքը տուի մե՛ծ փարջը,  
Աչեցի (1) անոր դարձը,  
Ալալ (2) օրը ծարաւ մնացի,  
Գլուխս քշտեցի (3) բարձր:

Կեցեր ես ռէհանին սէքին (4),  
Աստուած սիրես մի գար աղին,  
Բերանդ փիս կօ հոտի,  
Կերեր ես սխտորով պաստի:

Մայրս քալանդ եփեց,  
Վրան ալ սխտոր լեցուց,  
Ուր որ երթաւ պիտ հոտիս,  
Ղախանադ (5) քեզի խարեց:

Թամամին մաղարային (6) ալը,  
Ես տեսայ իմ եարիս գալը,  
Փախայ եարիս գիրկն ընկայ,  
Պաշլայեցի (7) ես լալթ:

Խոնուրկուտուր (8) ուխտ գացի,  
Հալվայիս թափսին (9) բացի,  
Չալուին (10) չափուք փաթեցի,  
Ես մարազս (11) հոն թողուցի:

ՍԻՆԱԿ Ա.— Թաղամաս, շրջան: 5) Տանիքէն: 6) Եկեղեցի: 7) Բագէ: 1) Անուշ: 2) Թռնիր: 3) Բազրեղէն ծիրան: 4) Եկուր:

ՍԻՆԱԿ Բ.— 5) Բերդ: 6) Դիրքին: 7) Փորձանք: 8) Տոլրակը: 9) Կուրմայ: 10) Սիրուի: 11) Սկիզբէն: 12) Հակառակ, դէմ: 1) Սպասեցի: 2) Ամբողջ: 3) Չարիլի: 4) Քիչ մը բարձր ճստատեղի: 5) Զոհանչը: 6) Բարայրին: 7) Սխալ: 8) Ուխտատեղի: 9) Ամանը: 10) Փշեքուփին: 11) Ախտ, ցուս:

Թվաչումեն ջուր խմեցիր,  
Ինծի քողուցիր գացիր,  
Քեզի հասայ պոնեցի,  
Դու ամօթով մնացիր :

Արմանեց սոխախը (12) մտայ,  
Այնտեղ ես քեզի տեսայ,  
Շանկանտ տղաներէն,  
Զորու սոսյախ (13) մը կերայ :

Տղայ ինչո՞ւ հոն գացիր,  
Առաջ ինծի բան չըսիր,  
Իմ խօսքս մտիկ չըրիր,  
Որ անտեղ ծեծ չուտէիր :

Երբանք Պառնին աղբիւրը,  
Ետ գանք Հոռոմին տեղը,  
Այնտեղ մենք մոմեր վառեմք,  
Բախտ տան մեզի սուրբերը :

Աստու աղօթք պիտ' ընեմ,  
Սուրբերուն մոմ պիտ վառեմ,  
Էկէր տղայ մը ունեմամ,  
Թեւը բողպան (1) պիտ կապեմ :

Կտի չէպը (2) Շուղուլն է,  
Գէլուն աղն (3) ալ այնտեղ է,  
Շատեր կու գան կը հաւքեն,  
Երեսդ տեսնելիք այնա (4) է :

Ժամը պսակի ես գացի,  
Եղբայրս քովս կանչեցի,  
Ճեպը խնծոր մը դրի,  
Երկնէն տղայ մ'ուզեցի :

Ընէհանիդ բուր քովս դիր,  
Ճերմուկ ձեռքդ ձեռքս տուր,  
Մատներդ ես մատնի շարեմ,  
Դուն ալ ինծի պագ մը տուր :

Քշտեցի չալը ելայ,  
Դուն ինծի եղար պեղա (5),  
Թող որ ինծի եար գտնեմ,  
Հոգ չէ թէ ան տէ՛փ չալէ :

Ալերը քեզի տանին,  
Դժոխքին քէօչէն (1) դնեն,  
Ինծի սէպապ (2) որ եղար,  
Քեզի հէքիմին (3) տանին :

Աստուած քեզի եար մը տայ,  
Պայը պոսը հետն ըլլայ,  
Սուրբ Սարգիսին աղօթեմ,  
Քուկմէն աղէկն ինծի տայ :

Մայրդ շարմաղը բերաւ,  
Մէջը ալիւրը դրաւ,  
Թրեց խմոր շաքարով,  
Ղուրապիյէ եփեց իւղով :

Ղալայճուն (4) աղբիւրը գացի,  
Ինծի այնտեղ բռնեցիր,  
Աղբարս մեզ չը տեսաւ,  
Էնտեղ դու ինծի պագիր :

Կուռնայ ժամուն դանտիլը (5),  
Աղէկ պան է պսակուիլը,  
Մէջիդ տարապուլուս կապէին,  
Ես ըլլայի փիւսկիւրը :

Ես քու սէվտայիդ մեռնիմ,  
Աչքս քամբուդ կը հայիմ,  
Աղէկ է որ կարգուիմք,  
Ձէ նը պաշղասին (6) կ'առնիմ :

Եօթը տարի դու գացիր,  
Ինծի գիր չի գրեցիր,  
Քեզի պէս եարն ի՞նչ ընեմ,  
Ալ իմ հոգիս հանեցիր :

ՍԻՆՆԱԿ Ա.— 12) Փողոցը : 13) Լաւ ծեծ մը : 1) Զարխափան : 2) Քարայրը : 3) Փայլուն  
քար : 4) Հայելի :

ՍԻՆՆԱԿ Բ.— 5) Փորձանք : 1) Անկիւնը : 2) Պատնառ : 3) Բժշկին : 4) Անուն : 5) Մոմկա-  
լը : 6) Ուրիշը :

Ատի ինչպէս տշլըխ է,  
Ղրկած փարադ խաշլըխ է,  
Եղբօրս փարայով շինեցի,  
Ճակտինս ալ պաշլըխ է:

Մըջմըջին (1) ծառը էլայ,  
Տակը փռեցի հասլալա (2),  
Եարբս անկէ կանչեցի,  
Հիմա կ'ուտե՞ կօ մըլայ (3):

Ըռմալի միշմըջը թէթուեցի (4),  
Կուտովը մալման շինեցի,  
Կուտովը մալմանտ շինեցի,  
Եարիս հեթիէ (5) ղրկեցի:

Եարիս խապար ղրկեցի,  
Առի իմ քովս բերի,  
Ինքն որ ձեռքէս պոնեց նը,  
Պագի, ամուր մը գրկեցի:

Ինկիդ (6) շառփեմ ոջ (7) հանեմ,  
Առնեմ էծէրս (8) տանիմ,  
Մալաքու բուքին շիրայով,  
Նիշէի (9) սուրուխ պիտ շինեմ:

Խէչս էկօ բան ասեմ,  
Ձեռքդ երեսիս քսեմ,  
Մատերուս ույմիշ (10) գալիք,  
Մասնիներ պիտ' որ շարեմ:

Երկայն չարսուէն (11) անցայ,  
Կիւլզը (12) տեսայ վախցայ,  
Խոցենց Ղաղարը (13) եկաւ նը,  
Եարիս շլլին (14) փաքքուեցայ:

Աղջի դու քու ճահը (1) մանէ,  
Իմ դանինս մ'ընեք մահանայ,  
Ես քեզի խօսք եմ տուեր,  
Թող քուշմանը խօրաթէ (2):

Չուխուր եուրար (3) գառ արծեմ,  
Քեզի կոծիկ (4) շառ բերեմ,  
Գիշերը մեզի գաս նը,  
Փաքքեմ ծոցդ պիտ դնեմ:

Էրէկ դու եկար մեզի,  
Պագ մը տուի ես քեզի,  
Էկէր մէկու մը ասես նը,  
Ալ չեմ ըլլար ես քեզի:

Տղայ դու գնայ զասապին (5),  
Առ աղեկը ճիկէրին (6),  
Անտէ (7) շուգուլի կեմայ նը,  
Եէնդ (8) դարձուր դու անդին:

Ճիկերը Շուգուլին կ'աննէ,  
Թեզիքէն անոնց քով է,  
Ձախձորցի թէ Ղարադէպցի,  
Պէտք է անոնցմէ աննէ:

Թոփրախ երզընին չալը,  
Անտեղ երզըն (9) է մալը,  
Տղայ, չըլլայ որ բերես,  
Քեզի կը քշտէ այդ պը:

Աղբարս ժամ ղրկեցի,  
Եարս մեզի կանչեցի,  
Հերսան աղեկ մը քշտեցի,  
Կամէջն (10) հետը տապկեցի:

Սաքիրակէն չիր (1) շինեմք,  
Հեյպէյին մէջը լընենք (2),  
Կաղանդին օրը քերեմք,  
Քրսիին (3) վրայ լեցնեմք:

Թուքը քոքվէ պաստեղ էրէ,  
Խառնիչդ մեծ շերեփ է,  
Կերայ, բերանս էրեցաւ,  
Տահա ստի շատ տաք է:

ՍԻՆԱԿ Ա.— 1) Ծիրանին: 2) Փոռց: 3) Արդեօք: 4) Թօքուեցի: 5) Նուէր: 6) Ընկոյզ:  
7) Ամբողջ, ողջ: 8) Մայրիկիս: 9) Նիշեւ անուշդէն: 10) Յարմարող: 11) Շուկայէն: 12)  
Փախուկ մը: 13) Փախուկի մը անունը: 14) Վիզը: 1) Ճախարակ: 2) Խօսէ:

ՍԻՆԱԿ Բ.— 3) Շքանի անուն: 4) Կոզիկ .բոյսի տեսակ: 5) Մսագործին: 6) Սրտին:  
7) Այնտեղ: 8) Կողմը, դէմքդ: 9) Կոյտ: 10) Զոր ծիրան: 1) Զոր սալոր: 2) Լեցնեմք: 3) Թռ.  
նիրին:

Մայրդ հատիկ խաշեց նը,  
Ղասի կուտով կերամք նը,  
Ազրարդ մեզի քէն եղաւ,  
Մենք քով քովի նստանք նը:

Տղայ, մեր տունը հոն է,  
Մարապին ձորին ծայրն է,  
Մութ գիշերուն, որ գաս նը,  
Ձեռքիդ շամամը(4) վառէ:

Լնթարուդ (5) փեշը սէթթէ (6),  
Հանկատէ (7) մէջքիդ քշտէ,  
Քաշան փեշտըմպալ կապես նը,  
Ղուրուրժիշ (8) եղիր իշտէ:

Թիւֆէնըդ (9) օմուզիդ (10) անցուր,  
Ընծի քուկ ձիւդ հեծցուր,  
Առ ու ձերին տունը տար,  
Մէհիտիյէ դուքնի հագցուր:

Իմ ձեռքս հինալով է,  
Ան հաս եկողը ո՞վ է,  
Էլլեմ ես ձեռքը պագնեմ,  
Ինքը զայլէթս քող դովէ:

Աղջիկ, երբանք ծակ քարը (1)  
Այնտեղ է լեռն ու ձորը,  
Մարդ մեզի չի տեսնեք,  
Այնտեղ ընենք մեր դավը:

Մարս շուննոց կնիկ է,  
Պապս ա(1) անոր մտիկ է,  
Էկէր մեզի տեսնայ նը,  
Կ'ըսենք անոր՝ շախա (2) է:

Տղայ, ձեր զանիւնը (3) հետէ՞տ (4) է,  
Առնել, ձգել ձեր ատէթն (5) է,  
Նամուսուդ, առուդ մարդիկ,  
Անոր սէպապը (6) տէտէդ է:

Դա տղան ո՞ւմ տղայ է,  
Պոյը պոսը զարար (7) է,  
Իմ եարէնիս (8) հարցուցի,  
Շուղուլցու մը տղայ է:

Անի ինծի զաւր (9) ըբաւ,  
Պոյըս կարն էր ընծի չառաւ,  
Ես ա(1) խալաքներ ուզեցի,  
Ինք ընծի ճուղապ (10) ըբաւ:

Աղջընի պէս մալ (11) ըլլամ,  
Շատերուն սագին կ'ըլլամ,  
Սեւ մագով, կամանչ աչքով,  
Դրացնիս տղին մալ կ'ըլլամ:

Երբամ աղջիկ մը գտնեմ,  
Անոր մէտէն (12) ես շինեմ,  
Երբ ձիւս հեծնեմ նը,  
Անի ալ քերֆիս կ'առնեմ:

Մահլանիս գալ պաշլայեցիր,  
Օր մ'ալ մեր դուռ քշտեցիր,  
Ասլանի պէս եար ունիմ,  
Ձողու ծեծ կ'ուտես, գիտցիր:

Ղալային մէջի ճիւնը,  
Ինծի տարիք ձեր տունը,  
Ամուր մը ընծի խածիր,  
Երեսիս վագեց արինը:

Դարվար գնայ դուն Տարեմտէն տես,  
Մէտէդ կ'ուզէ նը քուք ալ կ'ուտես,  
Վեր կ'ելլես Աշտու վանք կը տեսնես,  
Կուռինն ալ գաս նը զալան կը տեսնես:

Էկօ երբանք զատիին,  
Մենք հաւատանք զանիին,  
Ղատին մեզի քուրք մը տայ,  
Մենք ցուցունենք տէրտէրին:

ՄԻՒՆԱԿ Ա.— 4) Մումը: 5) Հագուստիդ: 6) Սոթթէ: 7) Հանգուցէ: 8) Հպարտացիր:  
9/10) Հրացանը ուտդ: 1) Վայր: 2) Կատակ: 3) Կանոնը: 4) Ատանկ: 5) Սովորութիւն: 6)  
Պատնար:

ՄԻՒՆԱԿ Բ.— 7) Ձափով: 8) Բարեկամիս: 9) Քենուտեցաւ: 10) Պատասխան: 11) Ապ-  
րանք: 12) Կամքը:

Տէրտէր ասի զսհին է,  
Հէջիմէթին թէմպէհն(8) է,  
Մեզի պիտ' որ պսակեսս,  
Ասի ասպէս սելվսա է:

Մենք մէյմէկս սիրեր ենք,  
Տարի մ'է խօսք ըրեր ենք,  
Մէյմէկէս մենք չենք գատուիր,  
Գաղտուկ տեներէն հայեր ենք:

Տղայ, դու գնայ Պէսնի,  
Էգիմիդ քոզ վարդ բուսնի,  
Էկօ դու ինծի առ որ,  
Մարըդ իր տեղը նստի:

Աղջիկ մագերդ հիւսէի,  
Թուշդ երեսիս քէի,  
Գլխս ծունկիդ վրայ դնէի,  
Պիւլպիւլի պէս խօսայի:

Շուրուլին նամբան տիր (1) է,  
Ալ պէկիրով (2) կը քելէ,  
Պոյը պգտիկ է ըմնա,  
Ի՛նչ հագնի նը կը վայլէ:

Էլայ ինկիզին ծառը,  
Հայեցայ Սագին ձորը,  
Սելիմ կուլիւլայ կօ իջնէր,  
Ե՛կէկը (3) պէկիրով մը:

Թուրին ծառը պոյոջըս (4),  
Թուր չի կերայ փորոքըս,  
Առ ու նամուս տունդ արի,  
Եար չեմ տեսեր օրոքըս:

Ջուր եկեր է բանտերնիդ,  
Ինծի առաւ տէրտէրնիդ,  
Տեղ երբալդ չեմ հոգար,  
Իսսիդ (5) մնաց եուրտերնիդ (6):

Տղայ գնա պան ունիմ,  
Քերկէֆիդ ալամ ունիմ,  
Դու ինծի պէս կանեսս նը,  
Ես քեզի պէս շա՛տ ունիմ:

Ղարասարու ներմակ մեղը,  
Տօնին գըշերն էկօ կեր,  
Ղայսէրի որ երթասս նը,  
Ընծի աղէկ այնա պեր:

Ես մեռայ նաշս (1) վերցուցէք,  
Իմ եարիս դուռէն անցուցէք,  
Աստղերը կոնակ շարեցէք,  
Լիսինկէն պատանք ձեւեցէք:

Լիսինկէն կայեց կամար,  
Անդին գնա, ինառ տամար (2),  
Ես հիւանդ էի դուրս ելայ,  
Քեզ պէսին խաթեր համար:

Ղարասար կացիր մըլա,  
Ինկիզ շառփեցիր մըլա,  
Ղարասարու լեռները,  
Տապան էշտեցիր մըլա:

Աղջիկ Մայամ տուռը բաց,  
Ղեներվէս (3) ներսը մնաց,  
Ալային պաչիկ տուիր,  
Իմ պաչիկս ո՞ւր մնաց:

Ջեր պատերը մալայ (4) է,  
Պատաննիդ ա(լ) չալայ է,  
Հարսեր տղայ մի բերէք,  
Տղան գլխու պեւա (5) է:

Տէներն էլլեմ մէկ էրկուր,  
Աստղերն հայմեմ (6) տասներկուր,  
Ամնուն եարը եկաւ,  
Իմիս ո՞ւր է հըմմէճուկ (7):

ՍԻՒՆԱԿ Ա.— 8) Կառավարութեան պատուէրն է: 1) Շիտակ, ուզիդ: 2) Ձիով: 3) Ետեւը  
ձիով մը: 4) Հասակովս: 5) Ամայի: 6) Բոյններնիդ:

ՍԻՒՆԱԿ Բ.— 1) Դագաղս: 2) Խիստ յամառ: 3) Ոտնամանս: 4) Մեփուած: 5) Մեփ-  
ուած: 6) Փորձանք: 7) Հիմակ:

Էլէք նրագ վառեցէք,  
Դըղմով միսը փաթեցէք,  
Ես էխպերըս կարգեմ կօ,  
Հարսունցունիս լացուցէք:

Ախպէր *ախպիրդ* (1) եմ էկեր,  
Ծարաւցեր ջուրդ եմ եկեր,  
Ջուրը մահանա էրեր,  
Քեզի տեսնել եմ էկեր:

Էրէնին *էռվին* (2) վրայ,  
Աչվիքդ *ըռինտիկ* (3) տղայ,  
Էրէտդ որի՞ է սեւցեր,  
Տեղ *իհալուդ* (4) է մըլա:

Բանջարնիդ ա(1) բագուկ է,  
Փրփրեմնիդ նագիք է,  
Ձեր աղջիկը չեմ առներ,  
Ճիներէն է *թէպիկ* (5) է:

Աղջիկներուն աչք կ'ընեն,  
Աղջիկներն ալ նագ կ'ընեն,  
Օտար տեղացիներու համար,  
Կուրինցիք պակունք կ'ընեն:

*Կաուն* (6) մը կէրմիր կտաւ,  
Արեւը մէրը մտաւ,  
*էլին* (7) տղան իր ինչն էր,  
Կընաց ու բովը մտաւ:

Տէներն էլլելս կու գայ,  
Դարվար հայիլս կու գայ,  
Էկաւ անցաւ ան տղան,  
*Ղատան* ստնելս կու գայ:

Շըխ-շըխ խնծորը բերէին,  
Մէջն ա(1) դարէնփիլ լնէին,  
Եարըս մեր տունը բերէին,  
Ինձ ա(1) խէչը դնէին:

*Տէները* (1) տէյնին վրայ,  
Տանձը խնծորին վրայ,  
Էլլեմ *թեւթեմ որ վեթի* (2),  
Կէնէնչ *չայիրին* (3) վրայ:

Կանանչ է ու մանանչ է,  
*Ղառղան* (4) ծառէն կը կանչէ,  
Աբանեց Մանուշակը,  
Տոքոր, տոքոր կը կանչէ:

Խնձոր մ'ունիմ խածած է,  
Խածա տեղն արծթած է,  
Էխպէրս ուզեց չի տուի,  
Էս իմ հարիս տուածն է:

*Լուսինկէն* (5) կամար կամար,  
Տղան է *ինաս* (6) տամար,  
Նշանդ առի դուրս ելայ,  
Քեզ պէսին խաթեր համար:

*Մաշարա* (7) մը փրփրեմ,  
*էյեկունիդ* (8) քրքրեմ,  
Մեր վրայէն անցնիս նը,  
Խաղ մը կէնչէ օր լսեմ:

Ես բու սէվտէիդ մեռնեմ,  
Էշկիդ նամբադ ու դուռն եմ,  
Ել էկօ որ կարգուիմք,  
Ձէ նը *պաշխասին* (9) կ'առնիր:

Դու էլար ծովը, գացիր,  
Սերկէր տարին ուխտը գացիր.  
Քեզի եար մը ուզեցիր,  
Խելիդ գլխէդ թոցուցիր:

Աղջի ինչն՞ խենթացար,  
Վախցար քեզի նար չգար,  
Ամէն օր ընծի խօսք տուիր,  
Ինչն՞ *ղաւլիդ* (1) դու մոռցար:

*ՍիտնԱԿ Ա.* — 1) Աղբիւրդ: 2) Առուից: 3) Գեղեցիկ: 4) Երթալուդ: 5) Աբագ: 6) Կան-  
գուն: 7) Ուրիշին:

*ՍիտնԱԿ Բ.* — 1) Տանիքը: 2) Թափի: 3) Կանանչին: 4) Ագառը: 5) Լուսնկան: 6) Յա-  
մառ: 7) Բանջարանոց: 8) Կողերնիդ: 9) Ուրիշը: 1) Խոստումդ, երդումդ:



Սեւ աչքերդ պիւրբիկ,  
Պըլըխներդ ուրբիկ,  
Գիշերը երազս տեսայ,  
Պոյլ պոսլ (2) կլորիկ:

Խաղողնիդ ալ ասմա է,  
Տեներնիդ (3) ալ քէսմէ է,  
Հագեր ես չիքարէ անքէրի  
Պոյդ պոսդ հոսմայ է:

Աղջիկ մ'ունիք տունմայ,  
Ինչ բսես նը քէն կ'ընէ,  
Ես ձեր աղջիկը չեմ առներ,  
Ինչո՞ւ կ'ընէք մահահա (4):

Մի հայեր պատուհանէն,  
Մէտէդ (5) կ'ուզէ ան պանէն,  
Ան պանին խաքերն համար,  
Պապըդ ծախեց քաննիրէն:

Այս սեւ տղայ, սեւ տղայ,  
Սեր մը առնեմ կեր տղայ,  
Մատըս սայանք է մտեր,  
Մեհլամ (6) եփէ բեր տղայ:

Ջալուխն (1) տակը եռւլայ (2),  
Ճըվըլ գըվըլ կը գըվայ,  
Օսկին ու մարգրիտը,  
Հարուստին աչքը մնայ:

Ջուր չի վագեր օլթիսը (3),  
Գէլ է տղուն կլթիսը (4),  
Թոզ երթայ լողնայ ծովը,  
Ըստկի (5) գէլ կլթիսը:

Ծիւն (6) էկեր է լեռները,  
Շիրիտեր (7) է լեռները,  
Հարսիկ տղադ մի դրկեր,  
Ղափուսուզ (8) կայ լեռները:

Մաստապանիդ (9) կը փոսեմ,  
Տղայ գիտես որ հոս իմ,  
Տղայ, դու հէջ մի հոգար,  
Դու համաձս ես քեզ կ'առնիմ:

Շուղուլհուլս եմ, ջլտեցէք (10),  
Մէկ զանատըս (11) կոյեցէք,  
Ես ձեր բուքը չի կերայ,  
Ինչո՞ւ էրինս կը մտնէք:

Աղջի անունդ Մայամ,  
Ես քեզի ըլլամ հայրան,  
Էկօ ինծի պագ մը տուր,  
Բարեխօս է Սուրբ Մարիամ:

Աղջիկ անունդ Ներկիզ,  
Էկօ առնեմ քեզ քերքիս,  
Տու ալ ինծի պագ մը տուր,  
Բարեխօս է Սուրբ Սերգիս:

Նըվի (12) քերվան է մըլա  
Տարտիս տերման է մըլա,  
Էրթամ խապար մը առնիմ  
Իմ հարս մէջն է մըլա (13):

Վարդէ չպուլս կըյեցի,  
Ես իմ հարս քէնցուցի,  
Բէն մ'էնիր, զատատ առիմ  
Զի կէտնալով զուրսեցի (14):

Ես ինկիզի (15) ծառն էի,  
Կիտէի քէ կ'առնէի,  
Աշխարքէն ամօք չըլլայ,  
Տղին տարտէն մեռնէի:

Էն օրերը անցան գացին,  
Մեմ մեր տարտով մնացին  
Տունէ օնախէ հեռու,  
Ղարիպ քուրպէք մնացին:

ՍԻՒՆԱԿ Ա.— 2) Հասակդ, տեաքդ: 3) Տանիքնիդ: 4) Պատնա: 5) Սիրտդ, ախորժակդ:  
6) Գեղ, դարման: 1) Փշտոննի: 2) Բոյն: 3) Առում: 4) Գլուխը: 5) Մաքրուի: 6) Զին. 7)  
Կապկպեր: 8) Փախցնող շրջիկներ:

ՍԻՒՆԱԿ Բ.— 9) Թեքեւ պատերով բարձրացուած հողամաս: 10) Զարկէք: 11) Թեւ:  
12) Անիկա: 13) Արդեօք: 14) Խօսեցայ: 15) Ընկոյզին:

Ծառերուն վրայ հով է,  
Սիրտս կրակ ու ծով է,  
Քանի հայրիկդ կորաւ,  
Անցած օրերս սեւ է:

Խնձոր մ'եմ ծառին գեղը  
Դողամ *հափրախին* (16) տեղը  
Վախնամ թէ փրփիմ ըյնիմ  
Սուղ տեղէս ածան տեղ մը:

Դուն մ'երբար գացողին հետ,  
*Պեւիսիզ* (17) եկողին հետ,  
Զես գար նը պարեւ զրկէ,  
Մեր մահիւն(18) եկողուն հետ:

Հա՛րսը, այժե՛րը, Զօպանը կու գայ:  
Խորիքնց այծը հեռուէն կ'երեւնայ,  
Աչապլան կաթը կթա՞ծ է մըլայ,  
Ափարեցնց հայլոն չոպան կը պռայ:

Ծմոան գիշերն էկէր է,  
Քասմա, պաստեղ բերեր է,  
Էկէ՛ք տղաք մստեցէ՛ք,  
Խասիկ սպլան էկէր է:

Տիտիգեցնց պախչին մէջը,  
Գո՛ղ Ռուբէնը մտեր է,  
Մեծ տուղում(1) մը ծակելով,  
Մէջը լման քափեր է:

Մանան սպլան էկէր է,  
Խօսկ խօրաքա բերեր է,  
Շամլեցնց ռընտիկ աղջիկը  
Էգին ձեռքը տառցեր(1) է:

Սաղ աղբիւրէն գուր կու գայ,  
Համնեցնց Աչօն է կու լայ,  
Իլիշիկը կըյելի՛ք(2)  
Աղբարը ո՞ւր ես մըլայ:

Շուղուլի անմբուն վրայ,  
Կօստիկին իշուն վրայ,  
Տղայ կարմիր պան մը կայ:  
Անապ ցիկա՞ր է մըլա:

Ակին գուրը գերմակ է  
Էրէսըդ գերմակած է  
Վախնամ թէ բան մը ունիս  
Ազոն սիրտդ վառած է:

Աչքըդ կանաչ, ունկդ պռզ,  
Էրեստ իջեր է սեւ թռզ,  
Ես ետեւդ չի զրկեցի,  
Ինչո՞ւ էկեր ես տոգ-տոգ(3):

Ղուրպէ՛ք երթալու եղաւ,  
Կիւրիկէն անմբայ ելաւ,  
Մնաս պարովն էր մոռցեր,  
Իլիկէն ետ էկաւ:

Վարդին տալը ծոնցի,  
Փէշըս տակը պոնցի,  
Ռւրիշին ինատ իշուն  
Էս այս տղան սիրեցի:

Տերվեր կ'երթամ մարդ չկայ,  
Տարվար կ'երթամ եար չկայ,  
Եսքս սնտուկն եմ տրեր,  
Հեջ տեսնելու քար չկայ:

Պատին վրայ կայներ էմ,  
Տիլտիլ առեր մայեր էմ,  
Տղայ էկուր պան մ'ըսիմ.  
— Մի՛նակ քեզի հաւներ եմ:

Ծառին տակը փոքեցի  
Հին տէրտերս նորեցի,  
Իմ եարիս ըսածները,  
Հիմա նորէն յիշեցի:

ՍԻՒՆԱԿ Ա.— 16) Տերեւին: 17) Անորոշին, անծանօթին: 18) Թաղը: 1) Դուղում: 2)  
կորելիք:

ՍԻՒՆԱԿ Բ.— 3) Պարսպ-պարսպ:

Պարկեմտակն էկաւ անցաւ,  
Օրես սեւով անցաւ,  
էս իմ անկտիս սեւ գիրը,  
Անասյա ո՞ր օր գրուեցաւ:

Վախցար մըլա ի՞նչ էղար,  
Կաղտուկ(3) մը տունը չեղար,  
Խեմք չեղողին պան չիկայ,  
Վախցողը փերուշան կ'ըլլայ:

Չապլան կացի աշէցի (1)  
Աչխո քամբան մնացի,  
Քէն էրիբ ինչ խալթ կերար,  
Լեռը չիս, թէք(2) մնացի:

Պապուդ խօսքը պոնեցիր,  
Մեր խորաթան(4) ուրացար,  
Աղբօրդ վախէն էր մըլա  
Արտիս կրակ ցանեցիր:

ԾԱՆՕԹ.— Կիրիճի ժողովրդական երգերը հառաքած է ՎԱՐԴՕ ԻնձէնԱՆ:  
Այդ հառաքածոյն ընդօրինակած է Ս. Յ. ԲԱՆԵԱՆ, 1944 Յունուար եւ Յուլիս ամիսներուն,  
Line Tree Inn-ի ծովեզերքը, ուր գացեր էր «ամիսի մը չափ հանգստանալու»:

## ԿԻՐԻՆԻ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԷՆ

### 1.— Թ. ՃՂԸԼԵԱՆ ԵՒ ԱԸՐՐԻ ՓԱՇԱՆ

Մանճըլզը բաւական մեծ՝ բոլորովին հայաբնակ գիւղ մըն է, Կիրիճէն կէս ժամ դէպի արեւելք, իսկ Սեբաստիայէն 15 ժամ հարաւ-արեւմուտք կ'իջնայ. Կիրիճոյ առաջնորդանիստ կեդրոնն էր ժամանակին: 1880-1881 թուականին, գիւղի երեւելիներէն Ասատուր աղա Ղարամանուկեան գիւղապետի (միւտիրի) պաշտօն ունէր: Անիկա շատ հարուստ ու պատուաւոր ըլլալուն, չըջակայ գիւղերու հայ, թուրք, չերքէզ, մուհաճիբ, դարափափախ եւ քիւրտ ժողովուրդները զինքը կը յարդէին, որովհետեւ շատ ազդեցիկ մարդ էր կասովարական շրջանակին մէջ:

Օրին մէկը՝ հռչակաւոր թուրք Սըրրի փաշան՝ որ դէպի Մարաշ կը ճամբորդէր, Մանճըլզ Ասատուր աղային հիւրը կ'ըլլայ: Հոն կը գտնուի եղբր նաեւ այս դէպքը գրի առնող Կիրիճցի Վարդօ Ինձէեանը, որ նշանաւոր ջորեպան մըն էր եւ միշտ Ասատուր աղային տունը իջեւանելու սովորութիւնը ունէր: Իբր ականատես այսպէս կը պատմէ Ինձէեանը:

Փաշան քանի մը օր Մանճըլզ կը մնայ: Բազդատմամբ ուրիշ թուրք փաշաներու՝ Սըրրի փաշա չափազանց մարդամօտ անձնաւորութիւն մըն էր, որուն հետ տեսակցելու առիթը կ'ունենար: Որպէսզի ժխորէ հեռու, այս չափազանց հանդարտ գիւղին մէջ փաշան մենակութենէ չնեղուի, Ասատուր աղան կը խնդրէ Ինձէեանէն, որ երթայ եւ Կիրիճցի ձըղըլեան թաղէտուր կանչէ, որ դայ եւ փաշան գրադեցնէ քիչ մը իր խաղերով:

Թաղէտուր Կիրիճի ծիրանի փայտէ շինած իր երեք ոտքի չափ երկարութիւն ունեցող սաղը ձեռքին կու դայ եւ բարեւելով, փաշային առջեւ կը կանգնուի: Խիստ հետաքրքիր, Սըրրի փաշան կը հարցնէ.

— Անունդ ի՞նչ է, ո՞ր տեղացի ես, այդ սաղը ուրկէ՞ առիր...

1) Սպասեցի: 2) Միճակ: 3) Գաղտնի: 4) Խօսակցութիւնը: